ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 437

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքը (Առինջ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Աբովյան համայնքի (Առինջ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1.Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքը (Առինջ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-011-0274-0016 կադաստրային ծածկագրով 0.904816 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր (ըստ ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր)	07-011-0274-0016 կադաստրային ծածկագրով 0.904816 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր ԲՆԿԳ-3՝ (6-9 վերգետնյա հարկ)

2.Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ ապահովելով ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3.Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ապահովելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների կողմից ներկայացված պահանջները (կցվում են):

4.ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Առինջ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Լ. Առաքելյան

Երևան, « 26 » «դեկտեմբերի» 2025 թ.